

ՀՏԴ 796.8.

ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊՈՐՏ

**ԳՅՈՒՄՐԵՑԻ ԿԻՆ ԾԱՆՐՈՐԴՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅԻ
ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2001-2016 ԹԹ.
Մաթևոսյան Ա. Վ., Գովեյան Ա. Ս., Ներսիսյան Ա. Ա.**

Աշխատանքում ներկայացվում է գյումրեցի կին ծանրորդների մասնակցությունը և սպորտային նվաճումները Եվրոպայի առաջնություններում, կանանց ծանրամարտի զարգացման փուլերն ու արդյունքները:

Բանալի բառեր. Գյումրի, ծանրամարտ, սպորտային նվաճում, Եվրոպայի առաջնություն,

Հայաստանում կանայք միշտ ունեցել են առաջատար դեր ոչ միայն ընտանիքում, այլ նաև հասարակական, քաղաքական, կրթական, մշակութային ոլորտներում, ինչպես նաև սպորտում՝ ապացուցելով իրենց գենդերային հավասարությունը:

Կանայք իրենց բնույթով պայքարող են, ունեն մեծ կամքի ուժ, որը ապացուցվել է բազմիցս: Հիշենք Լիպարիտի քրոջ հաղթական մենամարտը Իսմայելացի ըմբիշի հետ, հայ կնոջ մենամարտը տղամարդկանց հետ, երբ հաղթեց տասը ըմբիշի [1, 70]:

Հայ կանայք իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել նորանկախ ՀՀ առաջին կառավարությունում, խորհրդարանում, ինչպես նաև արտասահմանյան երկրների հյուպատոսարաններում: Եվրոպայի ծանրամարտի կանանց առաջնությունը առաջին անգամ պաշտոնապես անցկացվել է 1988 թվականին [2, 615]:

Աղջիկները Հայաստանում ծանրամարտով սկսեցին զբաղվել 1999 թվականից՝ Կոտայքի մարզում /Հոփսիմե Խուրշուդյան/:

Գյումրին, ի սկզբանե լինելով սպորտի և մշակույթի քաղաք, Կոտայքի մարզից հետո՝ 2001 թվականից, սկսեց մարզել նաև աղջիկների (Քրիստինե Թորոյանը, Մելինե Դալուզյանը, Թեհմինե Կարապետյանը, Աննա Գովեյանը, Քրիստինե Պետրոսյանը, իսկ 2004 թվականից՝ նաև Նազիկ Ավդալյանը), որոնք հետագայում, ցույց տալով բարձր

արդյունքներ, դառնում են ՀՀ ծանրամարտի աղջիկների հավաքականի անդամներ և մասնակցում միջազգային պատանեկան, երիտասարդական և մեծահասակների առաջնություններին:

Աղջիկների արդյունքները աննախադեպ էին, մեդալների քանակը ավելանում էր մրցումներից մրցում:

Միջազգային մրցումներում առաջին մեդալը Հայաստան բերեց Հռիփսիմե Խուրշուդյանը 2001թ. Եվրոպայի պատանեկան առաջնությունից:

2003թ. Դորդոնդում անցկացված Եվրոպայի պատանիների առաջնությանը ՀՀ աղջիկների հավաքականի կազմում կար չորս մարզուհի, նրանցից երեքը՝ գյումրեցի [Աղյուսակ 1]:

Աղյուսակ 1.

2003թ. Դորդոնդում անցկացված Եվրոպայի պատանիների առաջնություն

N	Անուն ազգանուն	Անձ. քաշ	Պոկում վարժ.	Գրավ. տեղ	Հրում վարժ.	Գրավ. տեղ	Ընդհ. գում.	Գրավ. տեղ	Բնակ. վայր
1	Կարապետյան Թեհմինե	47	57,5	IX	72,5	IX	130	IX	Գյումրի
2	Դալուզյան Մելինե	56,3	70	IV	90	IV	160	IV	Գյումրի
3	Խուրշուդյան Հռիփսիմե	62,8	85	I	102,5	III	187,5	I	Քասախ

Չորրորդ մասնակից Քրիստինե Թորոսյանն իր ուժերը չափեց Ե խմբում: 2004թ. Նորվեգիայում պատանիների Եվրոպայի առաջնությանը Հայաստանից մասնակցեցին երկու մարզուհիներ՝ Աննա Գովելյանը և Հռիփսիմե Խուրշուդյանը՝ գրավելով չորրորդ հորիզոնականները, բայց պոկում վարժությունում գյումրեցի մարզուհին՝ Աննա Գովելյանը, արժանացավ արծաթե մեդալի, որը գյումրեցի աղջիկների առաջին մեդալն էր:

2005 թվականին Բուլղարիայում անցկացված Եվրոպայի պատանիների առաջնությանը մասնակցեցին երեք մարզուհիներ, և հատկանշական է, որ ոսկին և բրոնզը հանգրվան գտան Գյումրիում: Այս մրցաշարում Մելինե Դալուզյանը ճանաչվեց լավագույն մարզուհի:

2006 թվականին Պալերմո քաղաքում Եվրոպայի երիտասարդական առաջնությանը մասնակցեցին երկու գյումրեցիներ. Դալուզյան Մելինեն դարձավ չեմպիոն, Կարապետյան Թեհմինեն նվաճեց արծաթե մեդալ:

2007 թվականին Ստրասբուրգում Եվրոպայի մեծահասակների առաջնությանը ունեցանք երեք մասնակից:

2008 թվականին Եվրոպայի մեծահասակների առաջնությանը ազգային հավաքականը մասնակցեց յոթ մարզուհիներով, որոնցից չորսը գյումրեցիներ էին [Աղյուսակ 2]:

Այս մրցմանը ՀՀ հավաքականին մի քիչ էր մնում Եվրոպայի լավագույն թիմ հռչակվելու համար, բայց վերջին օրը մասնակցող Հռիփսիմե Խուրշուդյանը ձախողեց պոկում վարժության երեք մոտեցումները և դուրս մնաց պայքարից՝ բավարարվելով միայն հրում վարժության ոսկե մեդալով: Եվրոպական առաջնության արդյունքներով Հայաստանի հավաքականը իրավունք նվաճեց Պեկինի օլիմպիական խաղերում ունենալու ծանրորդուհի մասնակից:

Աղյուսակ 2.

2008թ. Եվրոպայի մեծահասակների առաջնություն

N	Անուն ազգանուն	Անձ. քաշ	Պոկում վարժ.	Գրավ. տեղ	Հրում վարժ.	Գրավ. տեղ	Ընդհ. գում.	Գրավ. տեղ	Բնակ. վայր
1	Մանուկյան Լիաննա	52,63	75	VII	100	VII	175	VII	Քասախ
2	Կարապետյան Թեմինե	52,68	73	VIII	99	IX	172	IX	Գյումրի
3	Գովելյան Աննա	55,44	84	VI	100	VII	184	VII	Գյումրի
4	Եփրեմյան Հեղինե	57,81	78	IX	101	IX	179	IX	Քասախ
5	Դալուզյան Մելինե	68,59	107	I	128	I	235	I	Գյումրի
6	Ավրայան Նազիկ	68,79	106	I	136	I	242	I	Գյումրի
7	Խուրշուդյան Հռիփսիմե	74,50	0	0	141	I	-	-	Քասախ

Աղյուսակ 3.

Նորվեգիայի Ֆորդե քաղաքում անցկացված Եվրոպայի մեծահասակների առաջնություն

N	Անուն ազգանուն	Անձ. քաշ	Պոկում վարժ.	Գրավ. տեղ	Հրում վարժ.	Գրավ. տեղ	Ընդհ. գումար	Գրավ. տեղ	Բնակ. վայր
1	Աննա Գովելյան	52,53	78	IX	96	IX	174	IX	Գյումրի
2	Յայլոյան Իզաբելա	57,18	85	IX	105	X	190	X	Վերին Պտղնի
3	Պետրոսյան Քրիստինե	62,34	93	V	114	V	197	V	Գյումրի
4	Նազիկ Ավրայան	68,43	105	I	132	I	237	I	Գյումրի
5	Պողոսյան Սոնա	72,87	102	IV	125	IV	227	IV	Քասախ
6	Խուրշուդյան Հռիփսիմե	87,36	113	I	136	I	250	I	Քասախ
7	Դալայան Արփինե	136,37	93	V	120	VI	213	VI	Քասախ

2009-2014 թվականներին աշխարհի և Եվրոպայի տարբեր մրցաբեմերում մեր աղջիկներն ունեցան բավարար արդյունքներ, և, ամենակարևորը, ՀՀ հավաքականում անդամագրվում էին մարզուհիներ նաև հանրապետության տարբեր շրջաններից: ՀՀ մարզուհիները այս տարիներին ձեռք բերեցին հստակ մասնագիտական գիտելիքներ և 2015 թվականին ԱՄՆ-ում անցկացված աշխարհի առաջնության ժամանակ թիմային լավ մասնակցության շնորհիվ ՀՀ հավաքականը վաստակեց օլիմպիադայի մասնակցության երկու ուղեգիր: Մեր աղջիկները հաջողության գագաթնակետին հասան 2016 թվականին Նորվեգիայի Ֆորդե քաղաքում անցկացված մեծահասակների Եվրոպայի առաջնության ժամանակ, որտեղ առաջին անգամ մեր աղջիկների հավաքականը դարձավ Եվրոպայի լավագույն թիմը [**Աղյուսակ 3**]:

2016 թվականից հանրապետության տարբեր շրջաններում՝ Արարատում, Էջմիածնում, Վանաձորում, գործում են աղջիկների ծանրամարտի բարձր կարգային թիմեր, որոնք մասնակցում են ՀՀ առաջնություններին, բայց ազգային հավաքականը լրացնում են հիմնականում գյումրեցի և Կոտայքի մարզի մարզուհիները, ովքեր ապացուցեցին, որ ծանրամարտը մյուս մարզաձևերի պես հասանելի է նաև աղջիկներին:

Վերոգրյալի հիման վրա կարելի է եզրակացնել, որ Հայաստանի ծանրամարտի կանանց հավաքականի կորիզը, տղամարդկանց հավաքականի նմանությամբ, կազմված է Գյումրին ներկայացնող մարզիկներից: Դիտարկվող ժամանակահատվածում հավաքականի կազմում ընդգրկված Եվրոպայի երեք կրկնակի չեմպիոններից երկուսը գյումրեցիներ էին, իսկ նրանցից Նազիկ Ավդալյանը, որը 2004թ. սկրոբատիկա մարզաձևից տեղափոխվեց ծանրամարտ, Ա. Ներսիսյանի հմուտ մարզչական աշխատանքի շնորհիվ 2009թ. նվաճեց նաև աշխարհի չեմպիոնի կոչումը՝ ցույց տալով 266 կգ. (119 կգ + 147 կգ) արդյունք: Սա աննախադեպ հաջողություն էր հայկական ծանրամարտի պատմության մեջ, որը կարելի է համեմատել աշխարհահռչակ ծանրորդ, աշխարհի յոթակի չեմպիոն, օլիմպիական չեմպիոն Յ.Վարդանյանի արդյունքների հետ:

ГЮМРИЙСКИЕ ЖЕНЩИНЫ-ТЯЖЕЛОАТЛЕТЫ НА ЕВРОПЕСКИХ ЧЕМПИОНАТАХ 2001-2016 Г.Г.

Матевосян А. В., Говелян А. С., Нерсисян А. А.

В статье рассматривается участие гюмрийских женщин-тяжелотлетов в Европейских соревнованиях и их спортивные

достижения. В работе представлены периоды и результаты развития тяжелой атлетики в Гюмри.

Ключевые слова: Гюмри, тяжелая атлетика, спортивные достижения, европейские чемпионаты.

GYUMRI WOMEN WEIGHT-LIFTERS IN THE EUROPEAN CHAMPIONSHIPS FROM 2001 TO 2016

Matevosyan A. V., Govelyan A. S., Nersisyan A. A.

The paper presents Gyumri women weight-lifters' participation and success in sport in European Championships and the stages of development and results of weight-lifting.

Keywords: Gyumri, weight-lifting, achievements in sports, European Championships.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ԳԱԱ: Հայ ժողովրդական խաղեր: /աշխատասիրությամբ Վ.Բդոյանի / II հատոր: Երևան: 1980: 240 էջ:
2. Ղարազյոզյան Վ. Հ. «Ծանրամարտ. Օլիմպիական խաղեր: Աշխարհի և Եվրոպայի առաջնություններ» (տեղեկատու): Երևան: «Գրական վերնատուն»: 1999: 652 էջ:
3. Մխիթարյան Ա. Հայ պատանի ծանրորդները Եվրոպայի առաջնություններում 1996-2005թթ.: Գյումրի: «Դպիր»: 2009: 49 էջ:
4. Ազիզյան Գ. Ն., Աբրահամյան Մ. Ս., Դանիելյան Ա. Ռ., Մեղրակյան Գ. Մ., Հակոբյան Զ. Ս.: Կին ծանրորդների մարզման առանձնահատկությունները: ուսումնական ձեռնարկ: Երևան: 2011:
5. <http://result.ewfed.com/eventlist>

Տեղեկություններ հեղինակների մասին

Մաթևոսյան Ա. Վ. - պրոֆեսոր, ՀՀ ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ
Շիրակի պետական համալսարան

Գովելյան Ա. Ս. - ուսանողուհի, միջազգային կարգի սպորտի վարպետ
Շիրակի պետական համալսարան

Էլ. փոստ mars4p@mail.ru

Ներսիսյան Ա. Ա. - ՀՀ վաստակավոր մարզիչ,

ՀՀ կանանց ազգային հավաքականի գլխավոր մարզիչ

Էլ. փոստ art1957@mail.ru

Տրվել է խմբագրություն 10.10.2019